ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<<06>> <<օգոստոս >> 2019 թ

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 87
ԿԱՄՈ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N1239 որոշման 1-ին կետով հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335 որոշմամբ և հիմք ընդունելով Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2019 թվականի մայիսի 10-ի N3057-2019 գրությունը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի մայիսի 16-ի թիվ 59 հրամանը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար Կամո Սահակյանին 2019 թվականի սեպտեմբերի 8-ին գործուղել ք. Երևան ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոն՝ 2019 թվականի սեպտեմբերի 9-ից 20-ը ներառյալ Հայաստանի Հանրապետությունում գաղտնիության ռեժիմի թեմայով վերապատրաստմանը մասնակցելու համար:
2. Կ.Սահակյանի բացակայության ժամանակահատվածում գլխավոր քարտուղարի պարտականությունները դնել քարտուղարության պետ՝ Հայկ Կարապետյանի վրա:
3. Կ.Սահակյանին՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն՝ գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ.
4. Հաշվապահին՝ վճարումը կատարել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տ.ՄԱՐԳՍՅԱՆ